և այս շատ հավանական յենթադրությունը, ապա Խաղբակյանց ծագումը կարող ենք տանել մինչև ԺԵ. դարու վերջերը. Դլեն ապրում եր 1046 թվին, նորա հայրը Խաղբակ պետք է ծնված լինի Թ. դարու վերջերին։ Բայց անցենք իրական հիշատակարաններին։

Վանենու հիշատակարանը մեզ հաստատուն տեղեկություն է տալիս նաև Խաղբակյանց բնագավառի մասին. ավետարանը իշխանուհու կողմից նվիրված է «ի սուրբ մենաստանն, որ կոչի Հաւապտուկ, որ է շինեալ յանուն սրբոյն Աստուածածնին, եւ է բնական տուն եւ շիրիմ Զաջոյ իշխանի եւ նախնեաց իւրոյ, եւ է ի գաւառին Արցախոյ, եւ է հանդէպ ամրոցին որ կոչի Խաւխանաբերդ, ի տերութիւն երից հարաւատացն բարեպաշտ իշխանացն Զալալին, Զաքարիայի, Իւանէի»։ Բերդը հիշում է և Գանձակեցին*։ Բայց մինչև այժմ էլ Հավապտուկ և Խոխանաբերդ անունները գործածական են ժողովրդի մեջ. յերկուսն էլ գտնվում են Խաչենագետի վերա Գանձասարի վանքի դիմաց. Հավապտուկը մի բլուր է, վորի գագաթին շինված է համանուն վանքը, ծածկված այժմ անտառով և թփերով։ Վանքի և խաչքարերի արձանագրությունները, վոր ստուգել ենք անձամբ, հաստատում են յիշատակարանի տեղեկությունները Զաջուռի և նրա հայրենիքի մասին, տալով և թանգագին նորություններ տոհմի և ուրիշ անդամների նկատմամբ։

Եկեղեցին սագաշեն է և յերկու մասից բաղկացած, բուն տաճարից և գավթից, առանց սյուների, շինված 1163 թվին **.

> Թիւն Ո/ԺԲ էր. յիշխանութե Հասանա որդո Վախտ/անգա եւ ամուսնո նորա Մամքա/նա ես Ցոհան քվեր որդի տր Գրիգ/որ եւ Գերգ եղբաւր որդի եւ այլ միա/բանքս շինեցաք զեկեղ .. (կոտրած) քս ի փրկո/ութի հոգոց մերոց որք կարդ ... (կոտրած) շեց.

Այստեղ յիշված տեր Գրիգորը ինքն էլ ունի մի արձանագրություն 1167 թվից։

> Թիւն ՈԺԶ էր. Ես տր Գր կանգնեցի զխաչս ի տապանի եղբաւր իմոյ Ցուսուփայ, որ երկրպագէք յաղաւթս յիշեցէք։

Մի ուրիշ արձանագրություն նվիրված է տեր Գրիգորի յիշատակին.

> Ես Ցոհան առաջն/որդ սբ ուխտիս / շինեցի զե/կեղեցիքս եւ կարգեցի։ Բ։/ աւր պատարագ տէր Գրիգորի / ի տարոջն կատարիչք / գրոյս աւրհնին յայ ամ են.

Սույն տեր Գրիգորը Մեծարանց տան յեպիսկոպոսն եր. նորա հաջորդներն եյին յուր յերկու յեղբորդիքը՝ նախ Հակոբոս արհիյեպիսկոպոս և ապա տեր Սարգիս. վերջինս ՈՀԲ (=1223) թվին մի խաչ և կանգնել յուր յեղբոր՝ Հակոբոս արքեպիսկոպոսի տապանի վերա, իսկ ՈՀԴ(=1225) թվին մի յերկրորդ խաչ ել ի բարեխոսություն յուր*։ Գրիգոր յեպիսկոպոսի յեղբորորդի Գերգը, վոր 1163 թվի արձանագրության մեջ վանական եր միայն, ավելի ուշ՝ ցած ընկած, մի անթվական արձանագրության մեջ՝ յիշվում է արդեն իբրև «հայր» (վանից), ուրեմն յաջորդել եր վանքի առաջին վանահայր Հոհանին **։

> Ցանուն այ ես Աթանաս, որ զԳոգին երկիրն գնեցի ի Հաւոյ պտուկ տվի հայր Գորգ եւ այլ միարանքս տվինք տարուն Գ. աւր պատարագ նոր կիրակէին որ զհողն եկեղեցոյս հանէ ՅԺԸ հայրապետաց նզոված է մեռեկաւք կենդանաւք ով զժամն խափանի դատի այ.

Այստեղ տեսնում յենք մի յերևույթ, վոր հաճախ կրկնվում է միջնադարյան մեր յեկեղեցական պատմության մեջ. հայրապետական, յեպիսկոպոսական և վանահայրական աթոռները ժառանգական են և կապված իշխանական տոհմերի հետ. հայանի յե Պահլավունյաց որինակը կաթուղիկոսական աթոռի և Անիի եպիսկոպոսության վերաբերությամբ ԺԲ. դարու կեսից մինչև ԺԴ-ի կեսերը, և Որբելյանցը՝ Սյունյաց յեպիսկոպոսական (Ստեփանոս պատմիչ, Աւրպել Հոհաննես, Ստեփանոս—Տարսայիճ, Սարգիս ևն) աթոռի նկատմամբ ***. նույնն ենք տեսնում Խաչենի և Դոփյան իշխանների մեջ[1]։ Այստեղ էլ Մեծարանց տան յերեք յեպիսկոպոսները և Հավապտկի յերկու առաջնորդները նույն տոհմից են և Խաղբակյանց բնական տան և

---

* Տես Հավելված Բ. 3. և Գանձակեցի. 255, 256։

** Հավապտկի արձանագրությունները գրի յեն առնված 1897 թվին առանց հնագրական առանձնայատկություններն ի նկատի առնելու. դոցանից մի քանիսը, վորոնք տողատված են, վերստուգված են 1915 թ., տարաբաղդաբար անձրևների պատճառով հնարավորություն չունեցանք բոլորը վերստուգել և լուսանկարել։ Ընդգծվածները միացած են (лигатура)։

* Բարխ. Արցախ. 170։

** Գեռաքարեցոց տանից յեպիսկոպոսներ յիշվում են և ավելի ուշ ժամանակներում։ Գեռաշենի հայանի ավետարանը 1383 թվին կազմվել է կրկին Մովսես քահանայի ձեռքով «իշխանությամբ պարոն Զալալին, եպսուքբ տր Գրիգորին Գեռաքարեցին»։ Համ. Բարխուդարյան. Արցախ. յեր. 261,

*** Քաջբերունի. Ճանապարհորդական նկատողություններ (Փորձ 1877, № Գ և Դ., 1877/8 Բ. Դ., 1879. Ա. Ժ., 1881, Գ. Դ. Ե-Զ. շարունակությունը՝ Արարատ 1888. 1889. 1890) Ա.ր. 1890, 38—39.—Ալիշան Սիսական 237., բայց սխալվում է (Հովհաննես Աւրպելու հաջորդ Սարգսին նշանակելով տես մեր յոդվածը՝ Христ. Восток. 1913 СП. Потомство Тарсаича. եր 234։

1 Արցախ. 194, 204, 205, 206. 408., մեր հոդվածը՝ Потомст. Тарсаича. յեր. 224։